

# ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՒՈԼԻՒՑԻԱՆ

ՄԻՔԱՅԵԼ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ

(Շաբուճակութիւն<sup>1)</sup>)

Ֆուրիէ, Լուի Բլան և ուրիշ սոցիալիստներ ևս բացապրում էին նորագոյն պարմութիւնը իբրև արդիւնք դասակարգացին կոխուների զարգացման,

Մաքի այդ ամբողջ պաշարը՝ Հեգէլի դիալիքտիկան ու Ֆոյերբախի փիլիսոփայութիւնը մի կողմից, Փրանսիական պարմարանների ու ածած արդիւնքները միւս կողմից՝ այդ ամենը ի մի ձուլիով, սիստեմաբար մշակեց Մարքսը և սուլզեց մի պարկառելի թէօրիա, պարմափիլիսոփայական մի աշխարհայցըութիւն։ Նա անձամբ մոցրեց երկու ինքնուրոյն միւսք նաև՝ գնդեսական վիճակը որոշագրում է քաղաքական գոյութիւնը ոչ միայն նորագոյն, այլ և բոլոր ժամանակներու մունախնական զարերում, երբ մարդս աւելի շատ ժամանակ է գործ դրել իր նիւթական կարիքները գոհացնելու համար, — այդ կախումը բնականաբար աւելի զգալի պէտք է լինէր Երկրորդ՝ ոչ միայն քաղաքականութիւնը, այլ միաժամանակ սոցիալական, կուլտուրական կեանքի բոլոր միւս արդայացութիւններն ևս վերածւում են գնդեսական պայմաններին, իբրև միակ պարմառական աղբիւրին։

Մարքսը իր գրւածքներից ոչ մէկում չի պալիս իր թէօրիայի ամփոփ ուսութիւնը։ Բայց հիմնական մաքերը ցիր ու ցան գոյնում

<sup>1)</sup>Տես Մուրճ 1899, № 1.

ենք նրա բազմաթիւ գրւածքներում<sup>1)</sup>: Մենք կը փորձենք ամփոփել:  
 իր առաջին զույր զիրական աշխարհութեան մէջ՝ Zur Kritik der  
 politischen Oekonomie, (=ի քննադատութիւն Քաղաքագույնու-  
 թեան) Մարքսը տալիս է հակիրճ որոշումը հասարակական ստատիկի  
 (կայսերական, անշարժ դրութիւն) և դինամիկի (շարժուն գրութիւն):  
 «Արդիւնագործութեան յարաբերութիւնների ամբողջութիւնը, —  
 որոնք համապատասխանում են արդիւնագործող ուժերի զարգացման  
 մի որոշեալ աստիճանին — կազմում է հասարակութեան սննդեսական  
 շէնքը, այն իրական խարիսխը (բազիս), որի վրայ բարձրանում է իրա-  
 ւական ու քաղաքական վվրայի շէնքը» (Ueberbau, համար ամապատասխանում են հասարակական գիտակցութեան որոշեալ կերպեր): Նիւթական կեանքի արդադրութեան եղանակը պայմանա-  
 ւորում է սոցիալական, քաղաքական ու հոգեկան կեանքի պրոցեսը  
 առհասարակի. մարդկանց գիտակցութիւնը չէ, որ որոշակառում է  
 նրանց կացութիւնը, այլ ընդհակառակը՝ նրանց հասարակական  
 կացութիւնն է, որ որոշակառում է նրանց գիտակցութիւնը»:

Ապա հերեւեալ խօսքերով Մարքսը բացադրում է հասարակա-  
 կան դինամիկը. «Իրենց զարգացման մի օրոշ աստիճանի վրայ հա-  
 սարակութեան նիւթական արդիւնագործող ուժերը մինում են հա-  
 կասութեան մէջ գոյութիւն ունեցող արդիւնագործական յարաբե-  
 րութիւնների հետ, կամ՝ իրաւաբանօրէն խօսելով՝ սեփականութեան  
 յարաբերութիւնների հետ, որոնց մէջ շարժւել են նրանք (արդիւն-  
 ուժերը) մինչև վերոյիշեալ աստիճանին համանելը: Այդ յարաբերու-  
 թիւնները շղթայակապ են անում արդիւնագործող ուժերի զար-  
 գացումը. այն ժամանակ վրայ է համառ սոցիալական յեղափո-  
 խութեան շրջանը. սննդեսական խարիսխի փոփոխման հետ յեղա-  
 շրջում է դանդաղօրէն կամ արագընթաց՝ ամբողջ հսկայական  
 վվրաիշէնքը»: Նոյն միզեքը կրկնում է ուրիշ տեղերում ևս:

Բովանդակ պարմութիւնը, Մարքսի թէօրիայի համեմատ,  
 գիտուում է իրրե դասակարգային կոիւնների պարմութիւն: Հասա-

<sup>1)</sup> «Die heilige Familie» (1845 թ.), Կոմմունիստական մանիֆեստ (1847 թ. աշխարհակցութեամբ էնգելսի), «Փիլիսոփայութեան Թշւառութիւն» (1847), «Zur Kritik...» (1859) «Կապիտալ» (1871) և այլն:

բակութեան գնդեսական կազմաձեռւմը—սկսած այն ժամանակից, երբ քայլայլել է նախնական համայնական հողարիրութիւնը—մինչ այսօրւայ պատմութիւնը<sup>1)</sup> պայմանաւորւել է դասակարգային հակառակութիւններով՝ հակառակութիւն տիրոջ ու սրբի, պարիիկի ու պլեքչի, աւարականի ու ճորտի, բուրժուացի ու պրոլետարի միջե... Ներքին, մշտակաց ուժեր յեղաշրջում են անդադար արդիւնագործութեան և նրա հետ բոլոր գնդեսական յարաբերութիւնները, այսօր այդ յեղաշրջման պրոցէսը կարարում է մի առանձին արագութեամբ, որովհետև բուրժուազիացի արքադրած վիթխարի արդիւնագործող ուժերը անցնում են նրա կարողութիւնից, և՝ մի կողմից փութօրէն վասթարացնում են դիրող կապիտալիստական կազմակերպութեան կենսապայմանները, միւս կողմից սրեղծում են գոյութեան պայմաններ մի նոր հասարակութեան՝ որ պիտի հասրաւուի հասարակական արդիւնագործութեան և արդիւնագործութեան միջոցների հասարակական սեփականութեան խարիսխի վրայ... Ինչպէս որ սկզբներում, մարդկացին նախնական հասարակութեան մէջ չի եղել դասակարգային կույտ, ապագայում ևս նա պիտի վերանայ: Դասակարգացին անդադոնիզմը այսօր հասել է այն աստիճանին՝ որ կեղեքւած պրոլետարիատ դասակարգը իրեն կեղեքող բուրժուական դասակարգից չի կարող ազատւել ուրիշ կերպ, բայց եթէ միաժամանակ ամբողջ հասարակութիւնը ազագանգ ընդմիշտ հարաբահարութիւններից և դասակարգային կույներից... (տես Կոմմունիստական մանիֆէստ):

Մարքսը նախ և առաջ գնդեսագէտ էր: Տնտեսագիրութեան մէջ նա առաջինն էր, որ մերկացրեց ապրանքի, արժեքի, դրամի և այլ գնդեսագիրական կագեգորիքաների ներքին էութիւնը, ցոյց դալով նրանց իրեւ պատմական կագեգորիքաներ: Նա առաջինը հետազոտեց կապիտալի զարգացման ու յառաջիսաղացութեան օրէնքները և իր ներհուն զիսութեամբ մահացու հարւած դւեց կապիտալիզմին: Եւ նա առաջինն էր, որ դուրս բերեց տրամաբանօրէն ներկայ սոցիալական շարժման նպարակները իրեւ արդիւնք մինչ

<sup>1)</sup> Ալմինքն դրաւոր պարմութ. սկզբնաւորութիւնից մինչև մեր օրերը:

այսօրւայ պատմական զարգացման, դէմ դնելով ուստոպիստների ըստիքենական արդարասիրութեան պահանջներին՝ ճակատագրական, երկաթէ անհրաժեշտութիւնը:

Եւոլիցիայի գաղափարը հաստափուեց գնդեսագիրութեան մէջ: Տնաբեսական էւոլիցիան Մարքսի համար մի գիտեքորիկական սլոցէս է. այդպեղ նա հերեոզութեամբ կիրառեց Հեգէլի մեթոդը, միայն փոխանակ գաղափարի ինքնազարդացման՝ դնելով ֆաքտերի ինքնազարդացումը. նա, այսպէս ասած, մարմին գուեց Հեգէլի մեթոդիպիգիական գաղափարին: Նա ցոյց տւեց, որ ըստելեալ արժէք (Mehrwerth, արժէք, որ գործադէրը ստանում է գործաւորի չվճարւած աշխատանքից) արդադրող կապիտալը ոչ միայն թշւառութիւն է արեղծում, այլ և առաջնորդում է գէպի թշւառութեան բարձումը:

Կապիտալիստական մասնաւոր սեփականութիւնը առաջին ժիստումն է անձնական աշխատանքի վրայ հիմնած մասնաւոր սեփականութեան. բայց կապիտալիստական արդիւնագործութիւնը արդարում է բնական պրոցեսի անհրաժեշտութեամբ իր սեփական ժիստումը: Դա ժիստումն է ժիստման: Այդ վերջինը կը վերահասափարէ անհրաժեշտական սեփականութիւնը՝ հողի և արդիւնագործութեան միջոցների համայնական սեփականութեան վրայ՝<sup>1)</sup>:

Ընթերցողը բեսնում է այսպեղ Հեգէլի տրիադը: Մարքսը թէպէս և մի անգամ խոսքովանել էր, որ ինքը պոքետութիւնն է անում Հեգէլի բառերով, այնուամենայնիւ ըստ երեսոյթին հաւաքում էր Հեգէլեան ֆորմուլների անսխալտականութեան: Տրիադի փաստաբանութիւնը մեծ եռանդրվ առաջ բարաւ մանաւանդ էնդէլսը—Մարքսի alter ego-ն, նրա հայեցքների բաժմանողն ու լրացնողը—իր պոլեմիկական գրւածքի մէջ ընդդէմ Դիւրինդի: Այդ ֆորմուլի կիրառութիւնը մի խաղ է, որ չի կարող միշտ բաղդաւոր լինել: Արդէն Հեգէլի մօր նա սաստիապէս կաղում էր: Դուրս էր գալիս օրինակ, որ Արեելքը, իբրև թէզ (գրութիւն), ազարութեան բեսակայոց՝ մարդկութեան երեխայութիւնն է պատկերացնում (մինչդեռ դրանից առաջ եղել են բարբարոսութեան ու վայ-

<sup>1)</sup>) K. Marx, Das Kapital, հառ. I.

քենութեան ահագին շրջաններ, ուր մարդկային հասարակութիւնը երբեմն խկապէս Ռուսաօ՞ի փառաբանած դրախտն է վայելել), իսկ նորագոյն, գերմանական աշխարհը, իբրև սինթէզ՝ (համադրութիւն) Հեգէլի կարծիքով՝ ներկայացնում է ազատութեան կափարելարիպը, ուր իբր թէ ամենքին էլ ազատ են — մի բան, որ շատ հեռու է ճշմարտութիւնից:

Նոյնպիսի արկածների չենք հանդիպիլ արդեօք, եթէ սոցիալական էւոլյուցիայի մէջ տրիադի հակառագրական յաջորդութիւնը միայն տեսնենք: Ապագայ կազմակերպութիւնը լինելու է ժիարումն ներկայ կարգերի, բայց տրիադի համեմատ քննական անհրաժեշտութեամբ՝ ապագայ կազմակերպութեան ժխտումը ևս պիտի վրայ հասնէ. պիտի նորից, ուրեմն, ժխտուի համայնական սկզբունքը և նորից ուրեմն պիտի հաստատուի նրա անդրիթէզը... այսինքն մասնաւոր, անհաստական սեփականութիւնը...

«Տրիադը» Մարքսի թէօրիայի մէջ էական չէ, այլ պարահական մի կետ, մի ակսիլենտ, որի յապաւումից թէօրիան չի կարող դուժել:

Մարքսը անւանեց իր թէօրիան «Մաքերիալիստական ըմբռանումն պատմութեան 1)», հակառակ իդէալիստականին՝ որը հասարակական էւոլյուցիայի մէջ գաղափարական ֆակտորին է տալիս առաջնութիւնը: Մարքսիզմը գնում է գնդեսական ֆակտորը՝ իբրև առաջնական մղիչ ոյժ, բայց նա բնաւ չի հերքում գաղափարականի գերը պատմութեան մէջ: Գաղափարը, անհաստական, հոգեկան գործոնները մեծ կշիռ ունին, բայց ոչ իբրև տէրեր, այլ իբրև սպասաւորներ գնդեսական ֆակտորի:

Անթիւ յարձակումներ եղան մարքսիստական աշխարհայեցութեան դէմ՝ սկսած նրա հրապարակ գալու օրից. նա նոր-նոր սկսում է ճանապարհ բանալ գէսլի գիտնական սոցիօլոգների բանակը. նրան ձայնակցում են արդէն մի-մի պրոֆեսորներ ու թէօրետիկներ Գերմանիայում, Բելգիայում, Իտալիայում, նաև Ռուսաստանում:

<sup>1)</sup> Ակար նբան դաշիս են զանազան անուններ՝ բնդեսական մաքերիալիզմ, պարմական մարերիալիզմ, դիմեքորիկական մարերիալիզմ և ազն:

Անրարակոյս, մարքսիզմը իբրև պարմափիլիսոփիայական մէթէօրիա՝ բակաւին չի ներկայացնում մշակւած, ամբողջական մի սիստէմ։ Այդպիսի սիստէմի ուրագիծը միայն կայ։ Աւելի հրաժար, գործնական խնդիրներով կլանւած՝ Մարքսը և էնգելսը (վերջինս արդէն միշտ պիտի յիշւի առաջինի հետ) ժամանակ չունեցան փիլիսոփիայօրէն մշակելու և լայն փաստական հիմնարութիւն փայտ նորակառոյց թէօրիային։ Աշակերտները մեծ եռանդով աշխատում են այդ ուղղութեամբ։ Կառւցի, Կունով, Լաֆարգ, Հուգո և այլն հետազօտում են միջին և նոր դարերի պարմութիւնը իրենց սոցիալական, քաղաքական, կրօնական և այլ յեղաշրջումներով, գործում են նրանց պարճառական աղբիւրը գնտեսական, դասակարգային յարաբերութիւնների մէջ։

Կապարւում է և բացասական աշխարհանք այդ թէօրիայի նկարմամբ նոյն իսկ մարքսիստական բանակում. Էդուարդ Բերնշտայն, մարկսիզմի ամենասուպերնդաւոր թէօրետիկներից մինը, վերջերում սկսել է քննադադել Մարքսի վարդապետութեան շար էական հայեցակերպը։ Մի ուրիշ յայտնի սրցիօլոգ, բելգիացի պրոֆեսոր Դը Գրէէֆ, որը դաւանող է Մարքսի իդէալների, իր Transformisme sociale-ի մէջ մերժում է Մարքսիզմի այն դրութիւնը, որի համեմատ՝ իբր թէ ներկայ հասարակութիւնը ընալիան անհրաժեշտութեամբ դիմում է ինքն իրեն դէպի արդիւնագործութեան միջոց։ Ների համայնացումը։ Դը Գրէէֆը համարում է այդ դրութիւնը օպտիմիստական և հակագիտական։ Նոյն կարծիքն է յայտնում և պրոֆեսոր Վերնիր Զոմբարու։

Թէօրիան կանգուն կը մնայ սակայն։ Նա ունի կենսունակութիւնն ձիշտ է, նրա մի քանի դրութիւնները կարարելապէս չեն համապատասխանում իրականութեան, ձիշտ է, նա շար այրող հարցերի պարասխանը չի բալիս մեզ, նա չի բացաբրում օրինակ՝ փիլիսոփայական մոքի ծնունդն ու էւոլիւցիան, նա չի բացաբրում կրօնների և մասնաւորապէս համաշխարհային կրօնների ծագումն ու դարածումը, իսկ եթէ փորձում է բացաբրել ընկնում է անխուսափելի քաշքշոյների մէջ։

Ոմանք դարապարզում են Մարքսի մագիստրական թէօրիան՝ նրա չափականց պարզութեան ու միակողմանիութեան հա-

Մոր: Նաոր սոցիօլոգներ—ի միջի այլոց և ռուս սուբյեքտիվիստները —այն կարծիքն են յայրնում, որ սոցիալական էւոլիւցիան իրեւ վերին ասդիմանի կնճռոր մի պրոցէս՝ չի կարող կափարւել միմիայն դնդեսական ֆաքտորով, այլ բազմաթիւ ուժերի ներդաշնակ գործակցութեամբ՝ նիւթականի, մրաւորի, բարոյականի և այն։ Բայց այդ առարկութիւնը ինքնին չէզոքանում է, քանի որ մարերիալիստական ըմբռնումը չի ժխտում վերոցիշեալ մրաւոր, բարոյական և այլ մղութների դերը, միայն թէ դրանք դալիս են առաջնական (դնդեսական) ֆաքտորից յեպոց, որպէս նրա զարգացման անդրադառնումներ։ Մարքսիզմը չի ժխտում անհարի ներգործութիւնը իրեն շրջապատող միջավացրի վրայ, —ինչպէս այդ կարծում են սուբյեքտիւստները (տես օրինակ՝ Կարեևը, Основные вопросы философии истории): Մարքսը չէր կարող ժխտել անհարի դերը, քանի որ հէնց ինքը ահազին ազգեցութիւն ունեցաւ ժամանակակից սոցիալական շարժման ընթացքի վրայ։ Մարդիկ՝ որպէս բարձր իմացականութեամբ օժգուած էակներ՝ իրենք են սրեզծում իրենց պատմութիւնը, բայց միայն մղում ստանալով դնդեսական զարգացումից։ Մարդը միջամրում է սոցիալական էւոլիւցիայի մէջ իր խելացի, նպատակաւոր գործունէութիւնով, ձգում է ճանաչել դնդեսական զարգացման ուղղութիւնը և ծառայեցնել նրան իր որոշ իդէալներին։ Այդպէս, դասակարգային պայքարը՝ որ այսօր իրեւ մարդկանցից անկախ և անփոփոխելի մի իրողութիւն՝ ուիրում է քաղաքականիրթ հասարակութիւնների մէջ։ — այդ արդէն գոյութիւն ունեցող դասակարգային պայքարից օգուում են մարքսիստները և դարձնում են նրան զէնք ու միջոց՝ իրենց իդէալների իրականացման համար։

Մարքսի սոցիալական թէօրիան, որքան էլ պակասաւոր լինի, այնուամենանիւ լաւագոյնն է եղած թէօրիաներից, որ լուսբանում է մեզ հասարակական պէս-պէս կազմակերպութիւնների պահմական գոյացումն ու առաջդիմութիւնը, եւ բոպական քաղաքակըրթութեան ասդիմանուկան զարգացումը։ Նա լաւագոյնն է՝ որ բացարում է մեզ, թէ ինչպէս նախնական ժամանակներում մարդակերութիւնը կամաց-կամաց վերանալով, դեղի է դւել գերութեան, գերութիւնը՝ մորտատիրութեան (միջին զարերում), թէ ինչպէս

ժամանակի ընթացքում ճորտադիրութիւնը ևս անհրաժեշտաբար դապալւելէ, ծնունդ գալով ներկայ կապիտալիստրական կամ զուրծուազական կարգերին: Եւ հասարակական կազմակերպութիւնների այդ յառաջիստաղցութիւնը բացարձում է նա գնութեսական արդիւնաբերական ուժերի զարգացումով: Նա ոչ միայն հասրարապնդում է օրինականութիւնը (Gesetzmäßigkeit, законосообразность) սոցիալական էւոլյուցիայի մէջ, այլ և պարզ ու որոշ մարդացոյց է լինում գործող օրէնքների վրայ:

Մարքսի թէօրիան խիստ կերպով ջոկում է Սպենսէրի, Շեֆլէի, և օրգանական ուղղութեան բազմաթիւ ուրիշ կողմնակիցների թէօրիաններից: Մինչդեռ այդ վերջինները ձգվում են բացարել մարդկային հասարակութեան զարգացումը նրան օրուարդիերական, կամ բիոլոգիական օրէնքներով — Մարքսիզմը բացարում է հասարակական զարգացումը հասարակական պարճառներով: Տիեզերական գոյութեան կուիչ տեղ նա մտցնում է աւելի ճիշդ տերմին՝ «գասակարգային կոիւ», բնական ընսրութեան տեղ՝ գնութեսական ընսրութիւն:

Սակայն մարքսիզմը չի հակառակում դարւինիզմին, նա բացարձակ կերպով չի բաժանում մարդկային հասարակութիւնը անասնական հասարակութիւններից, նա չի ուրանում, որ կայ ինքնուրոյն մարդաբանական (անսրուպուոգիական) ֆաքոր, որ կան ցեղական, ազգայնական առանձնայափկութիւններ, որոնք հարիւրաւոր դարերի ընթացքում գոյացել ու ամրապնդել են մարդկութեան մէջ՝ աշխարհագրական, կլիմայական, գէօլոգիական և այլ միջավայրերի ազդեցութեան գոակ: Մարքսի մարերիալիստրական ըմբռնումը հաւակնութիւն չունի ինքը իբր տիրական օրէնք բացարել ամեն բան, ինչ որ մարդկային է. նրա համեմատ՝ մարդկային հասարակութիւնը ծնունդ է երկու միջավայրերի՝ բնական կամ կոսմիքական (տիեզերական) և արհեստական կամ սոցիալական. երկուսի միջև կայ մշտնջենական փոխազդեցութիւն: Անդարակոյս, հասարակութիւնների ճակատագրի վրայ մեծ ազդեցութիւն են ունեցել աշխարհագրական դիրքը, կլիմայական պայմանները, հողի որպիսութիւնը, բուսական և կենդանական աշխարհը և այլն: Առաջին քաղաքակրթութիւնները սկիզբ են առել մեծ գետերի բերաններում՝ նեղոսի, Գանգէսի, Խփրատի, Տիգրիսի

և այլն. Հնդկաստան, Եգիպտոս, Միջագեպք, Յունաստան քաղաքա-կրթութեան նախնագոյն որրամները եղան, շնորհիւ իրենց դիրքին, նպաստաւոր կլիմային, հողի բեղմնաւորութեան, և այլն—պայման-ներ, որոնք նւազագոյնի են հասցնում գոյութեան պայքարը և դի-րին են կացուցանում յառաջդիմութեան գործը:

Բայց կոսմիկական միջավայրի և անտրոպոլոգիական Փաքտորի աղդեցութիւնները մի անփոփոխ մեծութիւն չեն ներկայացնում: Նրանք փոփոխում ու մեղմանում են քաղաքակրթութեան զար-գացման հետ միասին, նրանց ճակատագրականութիւնը բարած-ւում էր միայն նախնական հասարակութիւնների վրայ (ինչպէս նաև այսօրւայ վայրենի ու բարբարոս ցեղերի վրայ), որոնց ար-դիւնաբերութեան գործիքները դեռ ևս իրենց զարգացման սաղմի մէջ էին և չէին կարող մրցել իրենութեան ազդակների (Փակտոր) դէմ: Բայց ժամանակի ընթացքում, շնորհիւ իր սեփական ձեռքով սպեղծած արդիւնագործութեան ու հաղորդակցութեան միջոցներին՝ մարդուս միշտ աւելի և աւելի աջողութ է դէր դառնալ բնութեան աւժերին, սանձահարել նրանց կամայականութիւնները: